ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՈՎ ԼԱՆՋԱԽԱՉԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԷՄԻԼԻԱՆՈՍ ՀՈՒՅՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

1963 թվականի դեկտեմբեր 3-ի երեքշաբթին տոնական օրվան մը երևույթ առած էր Ստամբուլի Գուրուչեշմե թաղի Երևման Ս. Խաչ եկեղեցիին համար։ Ուրիշ տարիներ Ս. Մինասի տոնին սովորական պատարագ մը կմատուցվեր այս եկեղեցվո համանուն մատռան մեջ, թե՛ ի հարգանս օրվան սուրբին և թե՛ ոգեկոչելու համար հիշատակը Գրիգոր և Հովսեփ Կարապետյան սրբազաններուն, որոնց ջանքերով հաստատված էր մատուռը։

Այս տարի սակայն այս եկեղեցիին մեջ պատմական հանդես մը տեղի ունեցավ։

Թուրքիո հայոց ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքի խնդրանքին ընդառաջելով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հատուկ կոնդակով պատված և լանջախաչ շնորհած էր Հույն Օրթոդոքս Եկեղեցիի Տիեզերական Պատրիարք Աթենագորասի փոխանորդ, Մելիտոսի տիտղոսավոր եպիսկոպոս գերաշնորհ Տ. Էմիլիանոսը։

Ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարք տնօրինեց, որ Վեհափառ Հայրապետի կոնդակի ընթերցումը և լանջախաչի տվչությունը կատարվի դեկտեմբեր 3-ին Գուրուչեշմեի եկեղեցիին մեջ և հրավիրեց նաև Նորին Սրբազնություն Տ. Աթենագորաս Պատրիարքը ներկա ըլլալու։

Եկեղեցին լեցված էր հայ և հույն հավատացյալներու խուռն բազմությամբ։

Ժամը 11-ին ժամանեց Նորին Սրբազնություն Տ. Աթենագորաս Պատրիարքը, Ս. Սինոդի անդամ չորս եպիսկոպոսներով և այլ հետևորդներով։ Ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքը ընդունեց Տիեզերական Պատրիարքը եկեղեցվո մուտքին։

Հավարտ սուրբ պատարագի, պատրիարքական փոխանորդ Տ. Հարություն քահանա Հալաճյան կարդաց հանդիսավորապես հայրապետական կոնդակը, որուն հաջորդեց նույնին հունարեն թարգմանության ընթերցումը։

Ապա խորան բարձրացան զույգ պատրիարքները և Էմիլիանոս սրբազան։

Ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարք, անդրադառնալե հետո հայրապետական կոնդակի գրության և եղբայրական ոգիին, հիշատակեց Տ. Էմիլիանոս եպիսկոպոսի ծառայությունը իբրև հունարենի դասատու Թուրքիո հայոց Պատրիարքության Ս. Խաչ դպրեվանքի մեջ, ինչպես նաև իր աշխատանքները հայ և հույն համայնքները և եկեղեցիները իրարու մոտեցնելու մարզին մեջ, և վերջապես հունարեն իր երկասիրությունը Հայ Եկեղեցիի մասին։ Ապա սրտագին բարեմաղթություններով անցուց էջմիածնական ականակուռ խաչը Էմիլիանոս սրբազանին պարանոցեն և հանձնեց հայրապետական կոնդակը։

Նորին Սրբազնություն Աթենագորաս Պատրիարքը թարգմանի միջոցավ իր գոհունակությունը հայտնեց այս պարգևաբաշխության համար, անդրադարձավ Հայ Եկեղեցիի մատուցած ծառայության քրիստոնեական դատին։ «Խորքին մեջ նույն են երկու եկեղեցիներու խորհուրդները,— ըսավ Տիեզերական Պատրիարքը,— և ես պիտի չվարանիմ Ս. Հաղորդություն առնելե Հայ Եկեղեցիի սուրբ սկիհեն»։

Տ. Շնորհք պատրիարք խոսք առնելով ըսավ, թե «Նորին Ամենապատվությունը մեր ժամանակներու ամենեն լուսամիտ և ճշմարիտ քրիստոնյա առաջնորդներեն մեկն է»։ «Սիրո հաղորդությունը,— շարունակեց ամենապատիվ Պատրիարքը,— արդեն իսկ իրականություն մըն է սույն եկեղեցվո մեջ երկու համայնքներու պետերուն և իրենց ժողովուրդին միջև։ Էականը և Աստուծո հաճելին այս է, ինչպես կհաստատե Աստվածաշունչը. «Այսու գիտասցեն, թէ իմ աշակերտք իցէք, եթէ սիրիցէք զմիմեանս»։ Իսկ խորհուրդներու հաղորդվիլը ժամանակներու բերելիք բարիքը պիտի ըլլա քրիստոնյա եկեղեցիներու համար»։

Հույն Օրթոդոքս Եկեղեցու տիեզերական պատրիարք Աթենագորասը և Թուրքիայի հայոց պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոսը իրենց հետևորդներով Պոլսի հայոց Պատրիարքարանում

Ապա երկու պատրիարքները առաջնորդվեցան հայոց Պատրիարքարանը, ուր ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարք ճաշկերույթ մը պատրաստել տված էր ի պատիվ Նորին Սրբազնություն Աթենագորաս Պատրիարքին։ Սեղանը, որուն շուրջ բազմեցան երկու եկեղեցիներու պետերը և բարձրաստիճան եկեղեցականներն ու երկուստեք աշխարհական ներկայացուցիչներ, եղավ ճշմարիտ քրիստոնեավայել եղբայրության, խորհրդանշական սիրո սեղանը։ Ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարք բաժակ առաջարկեց Նորին Սրբություն Աթենագորաս Պատրիարքի կենացը։ Աթենագորաս Պատրիարք ջերմ և սրտաբուխ բառերով բարեմաղթություններ ըրավ և բաժակ առաջարկեց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Վազգեն Ա-ի կենացը, հայտնելով միաժամանակ իր խնդակցությունը Ս. Էջմիածնի Մայր Աթոռին և Անթիլիասի միջև գոյացած հաշտության համար։ Ապա Էմիլիանոս սրբազանը, հայտնապես զգացված ոգիով, հայերեն լեզվով կարդաց փոքր ուղերձ մը, հայտնելով իր երախտագիտությունը Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոսին Ամենայն Հայոց և ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքին՝ իրեն ընծայված շնորհքին և պատիվին համար։ Շահան ծայրագույն վարդապետը բաժակ առաջարկեց հունաց Պատրիարքարանի ներկա Ս. Սինոդի անդամներուն կենացը և անոնցմե մին փոխադարձեց՝ բաժակ բարձրացնելով հայոց Պատրիարքարանի կրոնական ժողովի անդամներու կենաց։

Սեղանին վրա սիրալիր մաղթանքները և Պատրիարքարանի դահլիճին մեջ եղբայրական զրույցները շարունակվեցան մինչև ժամը 4, երբ Նորին Սրբություն Աթենագորաս Պատրիարք հրաժեշտ առավ և առաջնորդվեցավ պատրիարքանիստ Մայր Եկեղեցին, ուր իր ուխտն ու աղոթքը կատարեց և ապա իր հայրական խոսքն ու օրհնությունը տալով, մեկնեցավ ծափահարությանց, սիրո և հարգանքի արտահայտություններու մեջ։

ԹՂԹԱԿԻՑ